



ՇԱԲԱԹԵՐԹ

Ազգային, Քաղաքական, Բանասիրական եւ Զուարճալիք

Ժող. Տարի, Թիւ 45

ՇԱԲԱԹ

16 Մայիս, 1898

ՊԱՅՄԱՆՆԵՐ. — Ծաղիկի բաժանորդագիրն է: Տարեկան
սոյ համար 40, Գաւառներու համար 50 դրամ: Վեցամսեայ Պա-
սոյ համար 25, Գաւառաց համար 30 դրամ: Հասարակ 30 փառայ:
Բաժանորդագրութիւնը քիւի վրայ է, տարեկան բաժանորդները պի-
տի ստանան 52 եւ վեցամսեայները 26 քիւ Ծաղիկի: Պաշտօնական
Գրաստունը յանձն է հաստատուել բաժանորդներուն վճարները,

եթէ Ծաղիկի հրատարակութիւնը ո'ր եւ է արգելի հանդիպի:
Ծաղիկի բաժանորդներն իրաւունք ունին 100 այցելութեան նուէր
ստանալու:
Հանրագոյտ ճիւղերու վերաբերեալ յօդուածներ եւ քղապատ-
րիւններ շնորհակալութեամբ կ'ընդունուին:
ՀԱՍՑԷ. — Ծաղիկի վերաբերեալ ամէն ինչ պէ՛տք է ուղղել Պաղ-
ատական Գրաստունը, Կ. Պոլիս, Սուրբան Համամ, քիւ 14:

ԴԱՍԱՏՈՒԻ ՄԸ ՕՐԱԳՐՈՒԹԵՆԷ ԲԱՂՈՒԱԾ

Մայիս 4

Այսօր զացի ամսականս ուզելու Թաղ. Խոր-
հրդոյ ատենապետէն որ պատասխանեց թէ՛ վաղը
երթամ:

Մայիս 5

Այսօր նորէն ներկայացայ ատենապետին ըսաւ
թէ ատենապետին դիմեմ:

Ատենապետին զացի, բացակայ էր:

Մայիս 6

Ատենապետին տեսայ, յայտնեց թէ զանձապե-
տին դիմեմ:

Գանձապետին դիմեցի, ըսաւ թէ՛ ատենապե-
տին դիմեմ վաղը:

Մայիս 7

Խորհրդարան զացի ատենապետը տեսնելու հա-
մար, ատենապետին ցուցաբերեց թէ՛ ատենա-
պետ էֆէնտին տղուն փակցուներու համար բաղնիք
զացած է եւ թէ վաղը երթամ:

Հացագործը զէմս ելաւ եւ փողոցին մէջ վրաս
յարձակեցաւ այնպիսի լեզուով մը որ տեսնուած չէ:

Մայիս 8

Խորհրդարանէն ներս մտայ, ատենապետը հոն
էր: Ազգու ատենապետութեամբ մը բացատրեց այն
պատճառները որք ստիպած էին զիբը տղուն փակ-
ցուներու . . .

Ամսականի խնդրոյն զարով յայտնեց թէ ուղղակի
զանձապետին դիմեմ:

Գանձապետին դիմեցի, ըսաւ թէ ուղղակի ա-
տենապետին դիմեմ:

Ատենապետը դուրս ելած էր:

Հացագործը օձիքս չծողուր:

Մայիս 9

Հացագործին հետ ուղղակի ատենապետին տու-
նը զացինք:

Սարսուհին դուռը բացաւ եւ յայտնեց թէ ա-
տենապետ էֆէնտին նարտ խաղացած է կորուսած
ըլլալով՝ բարկութեան մէջ է, եւ թէ անօգուտ է իւր
բարկութեան միջոցին իրեն առաջարկութիւն մը
ընելը. հացագործը քովէս չբաժնուիր:

Ա Ք Չ Կ Ա Պ Ո Ւ Կ

Աս աշխարհիս վրայ ամանկ մանր մուր բանե-
րով մարդ խաբելու ժամանակն անցած է. հիմայ
մարդուս ձեռքէն ստակ խլելու համար խոշոր խոշոր
խոտտումներ, խոշոր խոշոր սուտեր, խոշոր խոշոր
ժանուցումներ պէտք է ընել:

Օրինակի համար ըսենք թէ Թատարոնի մը անօ-
րէն ես եւ ամբողջ ներկայացման եղանակին չեզոքին
մէջ շարունակ վնասէն զատ ուրիշ բան տեսած չու-
նիս: Հարիւր մէծքս քառակուսի տարածութիւն ու-

նեցող առիթոյն Թուրքեր կը շինեն, վրան մարդապոյս պատկերներով, պատկերուն վրայ հանդիպած տեղի կը փակցնեն ինչպէս որ հիմա կ'ընեն, հետաքրքրաշատ խաղի մը անունը կը դնեն, շքեղ, արտաքոյ կարգի փառաւոր ներկայացում եւայլն բռնոր կը շարեն, այն զիշերը եւ կամ ցերեկը կը տեսնեն որ վեց ամիսէն ի վեր պարսպ մնայով էօրիւմէք կապած օժեակներով ու Թիկնամուներով հանդիսատեսաց ահագին բազմութեամբ մը լեցուեր է, ամուսնեւորն վրայ երեքական հոգի մէկգմէկու ուսերուն վրայ կ'ելլեն կը նստին ամա այն զիշերը փոխանակ խոստացած խաղին Աղբատ Ղազարոսին հարսնիքը ներկայացուցեր են, ի՞նչ վնաս ունի, դուն տոակները գրպանդ նետելը նայէ տէ, յաջորդ զիշերուն համար սուտ մը գտնելու աշխատէ, ժողովուրդը ան ալ կը կըլլէ:

Կամ Թէ Ըսենք Թէ դպրոցի մը անօրէն են, կամ դպրոց մը բացեր են հաշւոյդ համար, ինչ դպրոց ըլլայ նէ ըլլայ, կ'ուզէ մանչու ըլլայ կ'ուզէ աղջկանց, միայն սա տարբերութիւն կայ որ աղջկանց դպրոցին ծախսը համեմատաբար քիչ մը եւելօք կ'ըլլայ: Շարունակ խղճի մտօք աշխատասէր են, ու դարձեալ հասոյթն իր ծախքը չը գոցելով, դպրոցդ գոցելու վտանգին շատ չէ մնացեր: Կ'ելլեն անմիջապէս հրապարակու դպրոցդ գոցել կ'սկսին, խոշոր բրօկրամ մը կը շինեն ու ձեռքդ հասած տեղը կը բաժնեն, դպրոցիս մէջը սա կը սորվին, նա կը սովորին, մարդ կ'ըլլան, գրագէտ կ'ըլլան, բիւնիսմ կ'ըլլան. կը տեսնեն որ չորս կողմէն աշակերտներ անձրեւի պէս տեղալ կ'ըսկսին, բայց իրօք տխմար կ'ըլլան եղեր, զիտցածնին ալ կը մոռնան եղեր, բիւնիս չէ գոռնաւ մ'անգամ չեն կրնար եղեր չալէր. բու ի՞նչուդ պէտք, դուն ստակները գրպանդ նետելը նայէ, եւ գալ տարուան համար ալ նոր եւ աւելի խոշորկէկ բրօկրամ մը պատրաստելու աշխատէ, ծնողքներն ան ալ կը կըլլեն:

Կամ Թէ Ըսենք Թէ՝ ամենէն շահաւոր ձեռնարկութիւն մը պիտի ընեն. օրինակի համար, սիկուր Թայի գրասենեակ մը կը բանեն, Ղարաթիա նոր շինուած խաներէն մէկը սենեակ մը կը վարձեն, սեղան մը եւ երկու բանաթէ կ'առնեն, սենեակին մէկ անկիւնն ալ Միլլերի երկամէ բտա մը կը զ'տեղեն, որպէս զի կրակի ալ զիմանայ, մէջն ալ բտալին բանաթները կը դնեն դրամագլուխի տեղ, անմիջապէս ամեն լեզուէ լրագրաց մէջ բառակուսի սեւ շրջանակներով կարծես Թէ մահագուժ է տուածը. ծագումներ հրատարակել կ'ուտան, 30 միլիոն լիրայի

դրամագլուխով եւ 15 միլիոն լիրայի հասոյթով, շահաւոր պայմաններով 1500 տարուան ընկերութիւն մ'է եւայլն. վերջապէս խոշոր ու ահագին ցուցնելով գումարը:

Իսկայն որչափ մարդ կայ գրասենեակի վագելու կ'աճապատեն, որը տունը, որը խանութը, որը նաւը, որը ապրանքը, որը կեանքը, որը տղան, որը աղջիկը, որն ալ կինը սիկուրԹայի դնելու կ'ըսկսին: Բայց դուն՝ ամիսէ մը գործը օրման կ'ելլայ խայտառակ կ'ըլլաս եղեր ի՞նչ վնաս ունի, դուն գրանդ ուռեցընելով նախ ինքզինքդ ապահովելը նայէ տէ վերջն ալ ուրիշ անունով պանքա մը կամ գրասենեակ բանալուն խոշոր միջոցները մտածէ:

Մեր ժողովուրդը անանկ ժողովուրդ մըն է՝ որ, պզտիկ սուտերը բանի տեղ չը դնէր, բայց խոշոր սուտ եղա՞ւ մի, ուզածիդ սուտը՝ բնաւ մի՛ վախնար, ամէնքն ալ կը կըլլէ:

ԴԵՏՈՂ

ԵՐԿՆԱՅԻՆ ՎԻՃԱԿ

Տնտեսական տագնապի պատճառաւ ամուսնական խնդիրն հեռագնակ կը կնճռոտի. դրամայի տխմար կ'ընդհանրանայ եւ աղջկանք ընդունայն կ'ուսումնասիրեն վարժարանաց մէջ առնա կառավարելու, ամուսին մը շահասիրելու եւ մայր հանդիսանալու պայմաններն: Երկատասարդաց եւ երիտասարդութեանց մի միակ միտքարուածութիւնն եւ յոյսն մնաց ամբողջ տարուան միայն մէկ օրուան վրայ, ուր վիճակ ձգելու արարողութիւն կատարուելով շատ տուններու մէջ կը լսուին ուրախութեան ձիւղեր եւ շատ սրտեր նորանոր յոյսերով անգամ մ'ալ կը գգուին երազելով ապագայ երանութիւն:

Անցեալ հինգշաբթի այդ երանելի օրն էր, այսինքն վիճակի օրն, քանի քանի տուններ թնայային ուրախութեան աղաղակներով, եւ քանի՛ կոյս սրտեր, երազեցին խաբուիլ, յանձն առնելով նոր Եւանդի դառնալու փորձութիւնն, որուն համար Աստուած դատապարտած է զմարդն ի մահ:

Բայց ի՞նչ փոյթ թէ ինչեր կը պատահին այս կամ այն տան մէջ, այս կամ այն սրտերու խորը՝ եւ այս կամ այն նոյն ամբարշտութեան հոգին հոգրիւ, եւ փափաք ունիմ միայն մէկ դէպք մը՝ միայն մէկ վիճակ մը նկարագրել:

Հինգշաբթի օրն օգր պայծառ էր, երբ պարսպ փակոններն կը գաղթէին ընթանալէ Ազգ. Հիւանդանոցի առջեւ, անդին տանտիկին մը իւր աղջիկներով եւ մանչերով եւ բոլոր տարասեւ հիւրերով իջաւ պարտէզին անկիւնը ուր կ'օրմիր էրամներ փառած էին հանդիսականները նստելու եւ յատկապէս աթոռակներ շարուած էին քօրսէ գնացներուն հանգստութեանը համար:

Հաճի Հոսոփ խախտէր արդէն առջի իրիկուընէ

հրաւիրուած էր իւր արքանահանրութիւնը հետեւ տրիկնայք, Գան-
պուր Մարգրիտ, Լալընլը Բրաւր, Մուխուֆճի Զանպիկ,
Երկանթաթիկ Ովսաննա, Տիւպէր Բարիս, Սուլուքեան
Ուսկուհի, Թէլէկրաֆ Հոռոք, Էրիկ ծեծող Կարիանէ,
Շէնլիք սիրող Կիւլիւնեա, Խըրթըրթ Էպրաքսէ, եւ ա-
սոնց մասնակցեցան հաւել մատամ ու մատամաղէլք, է-
տալը Գաթիկ, Քաթէթ Սէրէնա, Գամաղը Բէճիկնա, Մայ-
թապճը Զիլիլ, Փուլ իյնէսի Ֆիլօմէն, Ճըրճըս Վերթիկ,
Ազրապաշ Լուցիքա, Սաֆաէրուն Ուսկուկ, Ինստոճը
Մանիկ, Շաքաճը Անթուանէթ, Փըրըլտաղճը Էօփէնի:

Այս անթիքա խումբը կազմուելով շուտ մը էհրամ-
աներուն վրայ անգաւորուեցաւ եւ հետեւեալ խնդիրները
վիճակի դրուեցան:

Թաղականներուն եւ կամ Հոգաբարձուներուն հրա-
մարականները:

Ազգային լրագիրներ:

Նոր դրագէտներ:

Առանց դրամօժիտի աղջիկներ:

Գրականին ծակ միւսիւններ:

Ամուսնաթող մատամներ:

Իսկոյն մատամաղէլ Սաֆաէրուն Ուսկուկ վերոյիշեալ
խնդիրներն ժողովելով փայլուն կոնքի մը մէջ դրաւ եւ
իւր փափուկ ձեռամբ ժողոված եօթը լերանց ծաղիկներն
ու Տիւպէր Փարիսին հաւաքած եօթը Այազմային ջուրերն
ալ մէջը լեցուց:

Անմիջապէս փոքրիկ աղջիկ մը առժամանակեայ հարս
օծուեցաւ եւ անցաւ կօնքին գլուխը, այս խումբը կազ-
մող տրիկնը՝ Հաճի Հոռոք խաթունը իւր արքանահան-
րով միասին կօնքին չուրջը բոլորեց եւ ապա սկսաւ վի-
ճակը:

— Եկու քա աղջիկ, սա խակէմրիկին վրայ էլ տէ
լէհէնին մէջէն մէկիկ մէկիկ վիճակները պիտի հանես:

Մարգրիտ տուտու տուվան ըսէ որ մատամաղէլները
պաշլայէն պէյիթ գրուցել:

Մարգրիտ տուտուն հետեւեալ տաղն սկսաւ:

Օխտը լեռին էլվան ծաղիկը,

Սուրբ Ստեփաննոսին օխտը քարիկը,

Վիճակս վիճակ ըլլայ,

Տուն տեղէ պարին չկայ:

Ժողովուեցէք զարդարուեցէք

Եւտի սուրբլար աչքնա,

Թալէհսիզ գըզլար լախտընա,

— Հանէ աղջիկս հանէ:

— Հրամմէ քա Հոռոք, տուն պաշլայէ քի ամէննալ
սրայով ըսեն:

Օրթագեղին արեւը,

Նազով կուտան բարեւը,

Պարէ կոչկոր չունենան

Կընտակ գլխուն վերեւը:

— Հանէ աղջիկըս հանէ

— Պրունավիքին փիանդօն ելաւ:

— Ովսաննայինն է, վույ ասանի ալ թըպիւրըն ել-
լալ, էյ աս ըէք իւրյախ պան է:

— Մատամ Ֆիլօմէն, մէկ պէյիթն ալ տուն ըսէ:

Յարիլէ վալթօսու վար,

Գօրտօնու կէօզլիւլին վար,

Օ քի օնու սօրարսան,

Նէ կիւզէլ աէ կտասը վար:

— Հանէ աղջիկս, հանէ:

— Քա տուտու, սիկարնիք մը ելաւ:

— Սալիւսըզ Պաթիթիկն աիր, քա ճանրմ չօդ է-
տալը եիւրիւր, պիլիւսին ես, նէտէն կէլէ, պու կիւն
պուրայա եէթիլմէտի, զահէր սայկը էթաի:

— Նա քա ուճու գօփտու ուզադտան, պէն տէ չսչ-
տըմ:

— Սէրէնա, հայաէ պիր պէյիթ աէ սէն սէօյլէ:

Պահճէսի վար էվիմին,

Փէք ույտուրատուն կէչիմին,

Գալպինէ կիւճ կիթմէսին,

Փէք խըմպըլ տըր պիչիմին:

— Տուտու ճընկըրտաք մը ելաւ:

— Իշտէ թամամ, քէչիլիզ գլուխը անցուր տէ պը-
տըցուր:

— Տիկին, հրամանքդ ալ պէյիթ մը ըսէ:

Թէպէտ շատ մեծ կ'երեւնաս,

Բայց երտունէն վիր չկաս,

Վաղն թերեւս մէկն ելլէ,

Զքեզ իրին կին բնորէ:

Եւ ահա ձայն մը յանկարծ կ'աղաղակէ:

— Հանէ աղջիկս հանէ:

— Ինչ է ան:

— Մասնի մը:

— Չէ իմ չէ:

— Հապա որո՞ւնն է աս մասնին:

— Ինչ կ'ըլլայ խենթ, կը հաւատաս ասանկ բանե-
րու:

— Քա մեղա, ես ալ մէկ հատ մը ըսեմ տէ հապա:

Տարին անգամ մը կ'ելլայ,

Տայիմ մերինին կիյնայ,

Ասղին անդին կը վազէ,

Աս մարդուն մեռաքն ելլայ:

— Քա տուտու թուխթ մը ելաւ:

— Աճապա ի՞նչ թուղթ է:

— Վէրին պէն օգույայըմ, քա պու իստիֆանամէ
տիր:

— Աչկզ խաղայ ախլիկ, իստիֆրաս ալ ինչ էր:

— Չէ Զամպիկ հանըմ, իստիֆա ըսածը թաղականի
հրաժարականն է:

— Մեղա ասնի ըսէ, հէլպէթ կ'ընէ, ինչ ընէ զա-
վալըն, 100 զրուչ իրատ կայ, 500 զրուչ մատրաֆ կայ,
հէլպէթ ուղէ չուղէ իստիֆրան կ'ընէ:

— Էյ քա, հայտէյին լազըրաբայ տալարդ, վիճաղըմըզ
իլէրի կիթմէյօր:

— Մատամաղէլ Աննիկ սէն տահա պէյիթ սէօյլէմէ-
տին, ամա կիւլէճէք պիր չէյ սէօյլէ:

Քէվրան կէշէր օլուր իզ,
Ախ օֆ փիւֆ, էսէֆէնկիզ,
Ֆէյլէսօֆլար իշինտէ,
Տիօթէն իլէ տէնկ իզ:

— Հանէ աղջիկս հանէ:

— Աղէկ ա, մարիկ, ես հիմա ստոր ինչը հանեմ:

— Մեղայ տէր մեղայ, կոնքին մէջէն կէլիշի կիւզէլ պան մը հանէ:

— Պատկեր մը ելաւ:

— Քա աճապ քիմին փորթորէսի տիր:

— Ինծի անցուցէք տա պատկերը, կեցիր նայիմ...
ճանչցայ, եանի տէրը տեսնայ նէ արպէտա կը հանէ.
պողապ պողապի կուգան:

— Քա ճանրմ պիղիմքիլէրին իւստիւնէ պէյիթ սէօյ-
լէնմէյէճէք:

— Քա, Բրաբ տուտու տա պէյիթ սէօյլէմէտի, պիր
շէյ տէ սէն սէօյլէ:

Եիւրէյիմի աշարլար,

Իշինէ նար սաշարլար,

Պու նէ քէօր թալէյիմ վար,

Դըզլար պէնտէն գաշարլար:

— Հանէ աղջիկս հանէ:

— Պզտիկ փարայի չանթա մը ելաւ:

— Տէրտի Կրէկուտուն բորթմօնէսի տիր:

— Պազալմ իշինտէ փարա վար:

— Սաղլըզնտա թէօվպէ էթմիշ տիր. բորթմօնէսի-
նին իշինտէ փարա սաղլամազ:

— Սըրա Սէրէնանուն տըր:

Քիւշիւքտէն տիւշտիւմ տէրտէ,

Պիլմէմ սէվտիղիմ նէրտէ,

Կիտէր էլէ եարաշըր,

Պէօյլէ իքիտէ պիրտէ:

— Հանէ աղջիկս հանէ:

— Բերուզէ օզ մը ելաւ:

— Սաֆտէրուն Ուսկուկուն տըր:

— Քա վախ Ուսկուկ, իքիտէ պիրտէ վէնսանըն տա
պաշգասընը սէվէյօր, պիզէ սէօյլէմէզսին հէ'...

— Մայթապ իսթէմէզ մատմազէլ, վիճակ տըր պու,
զահէր հէր սէօյլէնէն տօղրու չըզաճազ:

— Աման Ուսկուկ, պիր լազըրտը տըր էթտի, էյ-
լէնէճէյիզ նէ օլուր:

— Կեցէք աղջիկներ հատ մըն ալ ես ըսեմ, մեղայ
արա չեն ձգիր քի պերան պանաս:

— Դըզլար, պրազըն Ուսաննա տուտու տա սէօյլէ-
սին:

Կըճը կըճը կիլինմիշ,

Բէք քէնտինէ պէյէնմիշ,

Եիւրէյի գըրըզ պու կիւն,

Աճապ քիմէ պէյէնմիշ:

— Հանէ աղջիկս հանէ:

— Պզտիկ չախը մը ելաւ:

— Ճըրճըր Վէրթինին տիր, քա նէ տօղրու չըզտը,
միւսիպէի Բասկալըն էթտիլինէ քիմ օլսա կիւճէնմէզ:

— Քա նէ' օլաւ քի:

— Նշանըն կէրի էթտի պիլմէ'զսին:

— Էրկու աչիլ քէօրնայ պիլէքիմ, կիւզէլիմ ախճը-
կանը կլտիլ կրակի էրիւ է. սէն հոգ էթմէ գըզ, նշանը
գըթլըզ օլսուն, էլիմի սաղլառամ էլլիսի, պաշըմը սաղ-
լառամ պաշը թէլլիսի:

— Նշանը կէրի էթտիլի կիւճիւմէ կիթմէզ Հաճի հա-
նըմ, օ տիլլէրիմէ գափանըպ տա Վէրթինիմ, սէն պէնի
մութլու էտէճէքսին տէր, կէօզ հաշը տէօքէր իտի տէ
մէյէր հալան ըմըշ հէփ:

— Քա ճանրմ հալան եէրաէ նա'սըլ տա աղլարլար:

— Կէօրիւմճէմ բէք ուստաը արը, նէ հատտինէ քի
գօճաը պիր լազըրտը էթսին, եաշը պուրնուհուհու ու-
ճուհուտա արը:

— Վույ հերիք խորաթէք, վճակը լմնցունենք օր'
լօրմա մը պան ուտուի:

— Տուրուն գըզլար, պիր պէյիթ կէլտի խաթրումա:

Արարըմ պուճազ պուճազ,

Պանա եար քիմ օլաճազ,

Դօրգարըմ սօն սօնուհուտա,

էյ վա'ն պուրունմայաճազ:

— Հանէ աղջիկս հանէ:

— Ակնոց մը ելաւ:

— Էտալը Դաթինին տիր:

— Խենթ գըզ պու գատար սւմուտուհու քէսմէ,

էլպէթտէ սանա տա պիրի պուրունուր:

— Պէնիմ միւնթաճըզմ հօգ, սէն քէնտինի տիւ-
շիւն մատմազէլ. հէմ կէօզիւք պէնիմ տէյիլ տիր:

— Պիր ալ էվլէլ կէօզիւքիւզտէ կէօրտիւմ:

— Պիրաէ քի պէնիմ օլմուշ, պանա էնտիւթ էթմէյէ
պիր հազգընըզ հօգ տուր զանն էտէրիմ:

— Ճանրմ չիմտի չազա պիր լազըրտը տըր էթտիք,
պու գատար աֆրօնթ իսթէմէզ, մատմազէլ:

— Էյ ճանրմ ուզուն էթտինիզ, պիթիլինիզ քի միւ-
սիւ Ծաղիկ տէ պիր պէյիթ սէօյլէյէճէք:

— Բէճա էտէրիմ մատմազէլ պէն պէյիթ պիլմէմ:

— Եօզ, հօգ, հէփիմիզ տէ բէճա խաթրիզ պիր պէյիթ
սէօյլէյէճէքսին:

— Էօյլէ օլտուղու հալտէ պաշ իւսթիւնէ ֆազաթ
էսկիտէն պիր պէյիթ գալմըշ խաթրումա օ տա հէմ էր-
մէնիճէ տիր հէմ պիլմէճէ գըրըզը պիր շէյ տիր:

— Զարարը հօգ նէ օլուրսա օլսուն:

Ճիտտաներու հայիլի,

Խաւար կուզէ որ փայլի,

Կէսը կայծ կէսն նստտեղ,

Մարգ ըլլալն երկրայիլի:

— Հանէ աղջիկս հանէ:

— Հալանին կոթը ելաւ:

— Հաճի հանըմ, պուհու չիմտի պիր թիւլէ սարըպ
մահալինէ կէօնաէրմէլիլիզ, ուտուտու պու տուր, նէ
տէրսին մամզէլ Ֆիլօ:

— Պէնիմ տէ գիւշիւմիւմ պու տուր:

Վերջապէս ընդհանուր հաւանութեամբ Հալանին
կոթը շարաշի մը մէջ գրուելով տիրոջը զրկուեցաւ, յե-
տոյ սեղանն նստան կոշիկահանը ուր մէկ ժամէ աւելի տե-
ւեց սեղանը, յետոյ երգեցին պարիսցիին եւ յերեկոյն գարձ-
եալ յատուկ մամուլայով ամէն մարդ իր տեղը վերա-
դարձաւ:

ՄԱՆՐ ՄՈՒՆՐ

Երկրապետարդին մէկը իր պաշտակէն լքեալ լինելուն պատճառաւ խորագէտ զգածեալ որոշած է ընաւ հոգ չլնել . — Ի՞նչ խելացի որոշում :

* * *

Երկրապետարդուն մը տեսնելով որ գեղեցկութիւն , չնորհ, արժանաւորութիւն եւ շատ ընտիր ձերքեր ունի , բայց դրամով չունենալուն պատճառաւ պիտի չը կրնայ ամուսնանալ , ձեռնարկեր է դրամով ամուսնութեան վրայ գրք մը գրել , յորում պիտի նկարագրէ անոր աղէտալի հետեւանքները : — «Էօթէրսէ էյի տիւտիւկ» :

* * *

Կին մը տեսնելով որ իր խման էրկը գինովութենէ ետ կենալիք չունի , հետեւեալ հնարքը ի գործ կը դնէ . այսինքն , ամէն անգամ որ ուշ ատեն քէօր գինով տուն կը դառնայ էրկը , զաղանապէս անոր զրպանը կը պարպէ , եւ երբ յաջորդ առտուն էրկը ապշած կը հարցնէ թէ ի՞նչ եղած են իւր ստակները , խելանի կինը կը պատահաւորաբար , « Գոհ եղի որ այնպիսի վիճակի մէջ ողջ առողջ առն եկար » :

Էրկին սատակ ամչնալով կուխտէ ալեւս գինովութենէ դադրի :

* * *

— Երկու գեղատի աղաքներ տեսնելով որ իրենց հայրը ամէն դիչեր ուշ ատեն սատակ գինով վիճակի մէջ տուն կուգայ , եւ մէկ կողմէն միւս կողմը գլորով հագիւ դռնէն ներս կը մտնէ առանց ըսածը եւ ըրածը գիտնալու , իրենք ալ կիրակի օրը գինով օյնի կը խաղան , զրեթէ իրենց հօրը ըրածին ճիշդ նմանութեամբ :

Այս խաղին մէջ աղոց գինով հայրը իր ճշգրիտ սխալները տեսնելով կը խափի իր անձուռնի վարմունքէն եւ երդում կ'ընէ անգամ մ'ալ բերանը օղի չլնել :

Ով հայրեր , գոնէ օրինակ առէք ձեր զաւակներէն ու կրթուեցէք , եթէ դուք ձեր օրինակովը կրթել չէք զիւտեր :

Ո՛վ բարք , ո՛վ ժամանակ :

* * *

Եթէ կանայք երբեմն խօսք մտիկ ընելու բարեհաճին , այո՛ , երբեմն , վասն զի միշտ չեն մտիկ ընել , թէ իրենք չահաւոր կ'ենին եւ թէ էրկի մարդիկ :

Հազար սնդամ ըսուեցաւ թէ կանանց հիմակուան ֆիստանները այնքան նեղ են որ քաղելու արգելք կ'ըլլան :

Այո՛ հիմակուան ֆիստաններն մեր քաղկին պէս նեղ են , հետեւապէս անկարելի է այդպիսի նեղ չըջանակի մէջ քալ առնել :

Որո՞ւ կ'ըսես մտիկ ընող չկայ :

Երէկ երեսունընկիւ կամ քառասուն տարեկան

կին մը իւր պատիժը կրեց : Ժամը ութին միջոցներն էր որ կամուրջէն կ'անցնէր այս սիկինը , չգիտեմ ոտքը սահեցաւ ինչ եղաւ , ինչաւ :

Ի՞նչալը բան մը չէ , քաջութիւնը երեւու մէջ է :

Տիկինը կ'աշխատի կանգնիլ , ֆիսթանը թոյլ չտար , ծախ կը դառնայ , աջ կողմը կը հակի , չկրնար կանգնիլ , կը կարմրի , կը նստի , հովանոցին կ'աթնելով եւ ծունկերուն այլեւայլ ձեւեր տալով կանգնիլ կուգէ , անկարելի է , քանի մը կանայք օգնութեան կը հասնին , ի՞նչ օգուտ կ'ընէ , ոտքերը չկրնար շարժել եւ վերջապէս կ'ստիպուին ֆիսթանը կէս մէջքէն հանել որպէսզի տիկինը կանգնի :

Կարգը եկաւ ըսի մտքէս , եւ տիկնոջ մօտենալով , իւր ձողկիչ պնասիրութեան , քաղցրութեամբ մը ըսի , — Տիկին , սա շրջագրեստը քիչ մը լայն ըլլար եւ դուք ալ հանգիստ քալէիք նէ չէ՞ր ըլլար :

— Բեզի ի՞նչ պոռաց երեսս ի վեր :

Սուսիկ փութիկ ճամբաս քալիցի , անիծելով այս մօտան որ մեր սունկը եւ քսակները տակն ու վրայ կ'ընէ :

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ս . Պատրիարք Հայրը Կիրակի Կայսերական պալատ գնաց ի չորհրդարանութիւն Մուհարրէմի : Երեքշաբթի ալ Կայսերական պալատ երթալով տեսակցեցաւ Վսեմ , Թահսին պէյի հետ :

— Ս . Պատրիարք Հայրը Վսնայ նահանգին որբանոցներուն թիւը չորսի բարձրացուց այս օրերս : Կարգադրեց որ յատկապէս աղջկանց համար որբանոց մը բացուի Սահնապատայ Ս . Գրիգորի վանքին մէջ , որուն ամսական հինգ ոսկի յատկացուց եւ նարեկայ վանքին մէջ ալ մանչերու համար որբանոց մը բանալ կուտայ , Աղթամարայ կաթողիկոսութեան իրաւասութեան ներքեւ , ամսական 10 ոսկի նպաստ յատկացնելով :

— Յիւլիոյի ազգայինք 14 որբի տարեկան ծախքն ապահոված ըլլալով , Ս . Պատրիարք Հայրն որոշեց չորս Դերջանցի որբ պահել Կարնայ քաղաքին որբանոցին մէջ , 4 որբ Տիարպէքի որբանոցին մէջ եւ 6 որբ Եգեսիոյ որբանոցին մէջ :

— Պատ . Փոխանորդ Տ . Գաբրիէլ Ծ . Վ . Անդղիոյ կեսպանատունը գնաց եւ Վիքտորիա թագուհւոյն ծննդեան տարեդարձին առթիւ , յանուն Ս . Պատրիարքին , չորհրդարանային այցելութիւն տուաւ Երեքշաբթի օր :

— Ռումանահպատակ հրեայ աղջիկ մը , Սուրէ Պանք , երէկ անձամբ խնդրադիր մը տուաւ Ս . Պատրիարքին , փախաք յայտնելով Հայ եկեղեցւոյ ծոցն ընդունուիլ : Ս . Պատրիարքը Փոփանորդ Հօր յանձնեց պէտք եղած քընտութիւնը կատարել :

— Համազգային Անկեղանոցի Հայոց մասուսին օծուին , ըստ որոշման Կրօն . Ժողովոյ , վաղը կիրակէ , պիտի կատարէ Տ . Հմայեակ Եպիսկ . որ միանգամայն պիտի օծէ մասուսին նուիրեալ Խաչելութեան , Ս . Աստուածածնայ , Ս . Դէորդի եւ Ս . Սահակ Պարթեւ հայրապետին նորանկար պատկերները :

— Համբարձման տօնի առթիւ Ս. Պատրիարք Հայրն Հիւանդանոցի մատրան մէջ պատարազեց եւ քարոզ խօսեցաւ ի ներկայութեան եկեղեցականաց եւ աշխարհականաց խումբն բազմութեան Պատարազէն յետոյ 100 հոգինոց սեղան մը արուեստաւ, որոյ նախագահեց Ս. Պատրիարք հայրն, որ նախ եւ առաջ բաժակ առաջարկեց Վեհ. Սուլթանին կենաց եւ իր նախորդաց յիշատակին։ Յոտնկայս եւ ընդհանուր ծափահարութեանց մէջ պարուեստաւ այս բաժակի Յետոյ յաջորդաբար բաժակներ պարպուեցան Ս. Պատրիարք Հօր, Վարչական Յանձնաժողովոյ, Տիկնանց Խնամակալութեան եւ ինչի համար։

— Կիւլպէնկեան եղբարք 50 Օսմ. ոսկի նուէրիցին Հիւանդանոցին։

— Ա. կարգի Մէծիտիլէ պատուանշան արուեստաւ Պարսից դեսպանատան Ա. Թարգման Յովհաննէս խանի։

Այս երեքշաբթի առաւօտ ժամ 3ին մօտ, Սազըզ Աղաճ Հռովմէական Հայոց Աթոռանիստ Ս. Աստուածածնի եկեղեցւոյն մէջ մեծ չքով կատարուեցաւ Ազարեան Անտոն Էֆէնտիի յուղարկութեան արարողութիւնը, ներկայութեամբ հանգուցելոյն եղբոր Գերերջանիկ Ազարեան Կ. Պատրիարքին, եւ Ազարեան ընտանիքին բոլոր անդամներուն։

Այս եկեղեցական արարողութեան կը նախագահէր կաթողիկոսական փոխանորդ Տ. Աւետիս Սրբազան Արքիպիսկոպիտ, շուրջը ունենալով 30 էն աւելի վարդապետներ։ Սգակիր ներկայ էին իրենց պաշտօնական զգեստով ի զինաց Հայոց Ս. Պատրիարքին Պատր. Փոխանորդ Տ. Գարիէլ Ծ. Վրդ. Ճէվանիւրճեան, Տ. Փառէն Վ. Կլայիցի Մելքոնեան եւ Պապրիարքարանի գործակատար Տ. Ներսէսեան Տիգրան Էֆէնտի. Յունաց Ս. Պատրիարքին եւ Պուլկարաց Էկզարքին փոխանորդ վարդապետները, Ասորոց եւ պիսիդպոսը, Հրէից խախամապետին երկրորդը, Բողոքական Հայոց Ազգապետ, Վսեմ. Յակոբ Էֆէնտի Պոյաճեան, Լատին հօգեւորականութեան բոլոր դասակարգերու ներկայացուցիչները, ինչպէս նաեւ եւրոպական դեսպանատուններու կողմանէ թարգմաններ։

Ժողովրդեան մէջ կը գտնուէին ոչ միայն այլ եւ այլ ազգերու վերաբերող հոգեւորականներ, այլ բարձրաստիճան աշխարհականներ, Նոյնպէս, ներկայ էին Անարատ-Յղութեան կուսարանի մայրապետները ու համայն վարժարանի սանուհիք, Ս. Լուսաւորչեան վարժարանի աշակերտները եւ դասատուները։

Դաճաղը՝ մահաբեմին վրայ դրուած էր, 40 ի մօտ ծաղկեխաչերով, զորս նուիրած էին Այրի Տիկին Սրբուհի Ազարեան եւ իր ընտանիքը, Տէր եւ Տիկին Պետրոս Էֆ. Ա. Ազարեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Ժօզէֆ Էֆ. Ա. Ազարեան եւ զաւակները, Այրի Տիկին Յակոբ Էֆ. Ազարեան եւ իր ընտանիքը, Տէր եւ Տիկին Անտոն Էֆ. Տիւզ եւ զաւակները, Տէր եւ Տիկին Մկրտիչ Էֆ. Հէքիմեան եւ զաւակները, Միւսիւ Բօպօլֆ Քանն եւ ընտանիքը, Պետրոս Էֆ. Մարուշ Ա. Մազար եւ Ազնաւոր ընտանիքները, Գարրիէլ Էֆ. Նորատունիեան, Տիկին Յակոբ Էֆ. Կէօչեան, Ալլահվէրսեան ընտանիքը, եւ ուրիշներ։

Եկեղեցական արարողութեան հաջորդ, ներկայները իրենց ցաւակցութիւնները յայտնեցին Գերերջանիկ Ազարեան Պատրիարքին, ինչպէս նաեւ Ժօզէֆ Էֆ. Ազարեանի եւ հանգուցելոյն զաւակացը։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պուլկարիոյ Բարձր. Ֆէրտինանտ իշխանն եւ Բարձր. Մարի Լուիզ իշխանուհին Չորեքշաբթի Թրիէսի ճամբով մայրաքաղաքս եկան իրենց յարգանքներն ու հաւատարմութիւնը մատուցանելու առ Վեհ. Սուլթանն, Ընկերակցութեամբ Կայս. անձնական սպայակոյտին միւշիւր Շաքիր փայայի եւ Կայս. Թիկնապահ Մէհմէտ Ալի փայայի, որք պաշտօն ունէին զանոնք ընդունելու, Կայս. Պալատ գացին։ Ֆէրտինանտ իշխան կը կրէր իր ունեցած Միւշիւրութեան առախճանի համազգեստը, իշխանն ու իշխանուհին պաշտօնապէս ընդունուեցան Վեհ. Սուլթանի ներկայութեանն եւ յետոյ գացին Մէրասիմ Տաիթսին որ իրենց բնակութեան յատկացած է, իրիկուան նոցին Բարձրութիւնը, հետեւորդը եւ Պուլկար գործակատարը ներկայ գտնուեցան Կայս. Պալատան մէջ տրուած հացկերութիւն։ Մեծ Եպարքոսն եւ պալատական պաշտօնատարք ալ ներկայ գտնուելու պատիւն ունեցան։

— Սըր Ֆիլիք Քըրրի, Կ. Պոլսոյ նախորդ դեսպանն, Հինգշաբթի մեկնեցաւ մայրաքաղաքէս, իրեն յաջորդած է Սըր Նիքոլա Բոտէրիք Օ'Քոնօրի Բեթերսպօրկի դեսպանն։

— Յորենի գինն ինկած ըլլալով հրամայուեցաւ հացին գինն հինգ փարա պակսեցնել։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՍՊԱՆԻՅԵ ԵՒ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՊԱՏԵՐԱԶՍԸ

Մինչդեռ երկու կիսագունդերուն վրայ ամենուն ուշադրութիւնը կեդրոնացած է Քուպայի մօտերը իրարու մօտեցող թշնամի երկու նաւատորմերուն վրայ, Սպանիական նաւատորմը, որու կը հրամայէ ծովակալ Սէրվէրա, Քիւրասաօէ մեկնելէն ետեւ, յառաջացաւ զէպ ի Սանթիակո, Քուպայի արեւելեան ծայրը։ Սպանիական հեռագրական գործակալութիւններ կ'ըսեն թէ հինգշաբթի (Մայիս 19) Ամերիկեան երկու մարտանաւ ուժեղութեամբ զՍանթիակո եւ դեռ քաղաքին առջեւ կը գտնուէին երբ երեւեցաւ Սէրվէրայի նաւատորմը։ Բնականապէս խուճապով փախան իրենց արհարկու ոռոխին առջեւէն։ Սպանիական նոյն ազրիւրներ կ'ըսեն թէ ծովակալ Սերվէրայի զիսաւորութիւնն է Հալանա երթալ եւ քաղաքին ուտելիք եւ զինուորական պիտոյք հայթայթել։ Միեւնոյն ժամանակ Ամերիկեան երկու նաւատորմերը, որոնց կը հրամայեն Սէմիսըն ծովակալը եւ Շլէյ, թէեւ միացած են, չեն երեւցած։ Այս լուրն իսկզբան ցնծութեամբ ողջունուեցաւ Մատրիտի մէջ, բայց հիմա սկսած է անձկութիւն պատճառել։

— Զրոյց կայ թէ Սանթիակոյի մէջ մեծ նաւամարտ մը տեղի ունեցած է։ Կ'ըսուի թէ սպանիական նաւատորմը բնաջինջ եղեր է, մինչ Ամերիկացւոց կորուստն է միայն 700 մեռեալ եւ երկու մարտանաւ։ Բայց մինչեւ հիմա այս լուր չհաստատուեցաւ։

— Մաքլինի նախագահ յայտարարութիւն մը հրատարակեց որով զրոյշի տակ կը կանչէ 75,000 կամաւոր։ Այս կերպով ամբողջ բանակը կամաւորներով մէկտեղ կը բարձրանայ 280,000 ի։

ԿՈՐՈՒՍԵԱԼ ԿՏԱԿԸ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Բ.

ՓՈՒԼԱ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

Սուչօ Կիրգա նկուն ու ընկճուած Պետիկին բնա-
կարանէն դուրս ելնելէ վերջ առանց ուր երթալը դիտ-
նալու զէպ ի Բերայի կողմն յառաջանալ սկսաւ եւ Գու-
լա՝ որուն թիւերուն սակ ձմերուկ չէր սեղմեր, ինչպէս
կ'ըսեն ռամկօրէն, այգալիտի տրամի մը դերասաններէն
մին ըլլալուն համար եւ պարոն Կիրգա առած երկու ոս-
կիներով, ոչ միայն օրականը, այլ եւ քանի մ'ամսական
չափ միասին առած ըլլալով, չուզեց անոր օձիքը թո-
ղուլ ու սկսաւ յուշիկ ու մօտէն իրեն հետեւիլ, Բաւա-
կան քայլիւ վերջ Թէքքէին մօտ ութը տասը աթու-
նեք բեռնաւորուած բեռնակիր մը յանկարծ Մենակեացին
բաղիւնցաւ որ իր բեկեալ վիճակին մէջ չէր կրցած բեռ-
նակրին ազգաբարձութիւնը լսել, Գուլա թէպէտ տեսած
էր բեռնակրին մօտենալը, բայց հազիւ կրցած էր բաղիւ-
ման միջոցին Սուչօ Կիրգայի քղանցքէն քաշել:

Այս զէպքը պատճառ եղաւ որ Կիրգա իր սխալ ուղ-
ղութեան հետեւիլն ըմբռնեց եւ քիչ մը հոն քարացած
մնալէ վերջ, իր ճամբան փոխեց եւ Գուլէգարուսիէն
զէպ ի վար իջնել սկսաւ, ըսելով Գուլայի:

— Տղա՛ս, քեզի պէտք ունիմ, կ'ուզեմ որ իմ քովէս
չբաժնուիս:

— Ի՞նչ, պարոն, կը կարծէք որ առանց Պետոյի
հետ խորհրդակցութեան անոր վերաբերեալ գաղափք մը
ձեզ կ'իմացնեմ եւ կը թողու՞մ որ առ այդ ձեր ձեռաց
մէջ գործիք մ'ըլլամ, զրմելով իմ տուած խոստումս եւ
մանաւանդ կը կարծէք որ ես առանց զբաղմանց ու բաղ-
դին բերմանց լքուած դատարկապոյտ մը եմ:

— Ո՛հ, տղա՛ս, ո՛չ, կը ցաւիմ որ հակառակ ուշի-
մութեանդ նպատակս չհասկցար, ո՛չ քու գաղափքդ
կուզեմ կորզել ձեռքէդ եւ ոչ իբր դատարկապոյտ մը
քու վրայ կարգահատիմ, պարզապէս այն սիկարեան-
նորուն զորս քիչ մ'առաջ տեսար, իրենց արժանի դասը
տալու համար քանի որ քեզի նման ուշիմ ու ճարպիկ
մէկու մը պէտք ունիմ, զքեզ իմ ծառայութեանս կ'առ-
նեմ, կ'ընդունի՞ս:

— Օ՛հ, այդ ուրիշ, երբ մէկը որ չստիպէր զիս իմ
խոստմանս զրմելու եւ արամաղիր ալ կ'երեւի լիուրի
զոհանել զիս իր վճարումներով, այն տեսն խնդիրը կը
փոխուի ես ալ կ'ընդունիմ:

— Ապրի՛ս, տղա՛ս, հիմա ինծի հետեւէ՛ եւ երբ քիչ
մ'առաջուանին նման զէպք մը պատահի, ի՞նչ որ շատ
բնական է այն սիկարեաններուն ինձ բրածէն ի վեր վրաս

տիրող մտադրազուլեան պատճառաւ, կ'ուզեմ որ զիս
յուշտրերի՛ս, հիմա երթանք կամուրջ:

— Անհոգ եղէք: ձեզ գոհացնելու առիթը երբէք
չպիտի կորսնցնեմ:

Այս մասնակի պայմանագրութիւնէն յետոյ երկուքն
ալ կամուրջ հասնելով, հազիւ կրցան ժամանել վերին
Վոսթոր մեկնող վերջին շոգենաւուն եւ Կիրգա առաջին
կարգի երկու տոմսակ առնելով, մասն շոգենաւ եւ կողմ-
նակի խցիկի մը մէջ առանձնացան, եւ որչափ պէտք
ունէր ինքն իր մէջ ամփոփուելով խորհելու:

Երբ շոգենաւէն դուրս ելան եւ նաւամատոյցին ար-
տաքին մասն անցան Պարոն Օհան անմիջապէս զիմաւո-
րեց զԿիրգա եւ հարցուց:

— Ի՞նչ լուր, բարեկամ, անշուշտ մեր նպատակը
վերջնապէս իրագործուեցաւ:

Բայց վայրկեանապէս լսեց իր մտերմին խոժոռած եւ
արամաթախիմ զէմքը նշմարելով եւ բացաբանչեց:

— Ո՛հ, բարեկամս, ի՞նչ ունիս, արգեսք դժբաղ-
դութիւն մը պատահեցա՞ւ ձեզ:

— Ա՛խ, սիրելիս, ամօթապարտ եմ քու առջեւ
եւ քու սիրալիւր հոգածութեամբ զիս աւելի կը ճնշես:

— Կաղաչեմ, չեմ հասկնար թէ ի՞նչ բոել կ'ուզես:

— Հոս չխօսինք եւ ուղղակի տուն երթանք:

— Շատ լա՛ւ: Երթանք քանի որ հարկ է եւ հոս
մնալու ալ պէտք մը չունինք:

Սուչօ Կիրգա իր չորջն ակնասկ մը պտտցնելէ յե-
տոյ բարեկամին հետ զէպ ի Մէսարպուրնու ուղղութեան,
առանց ուշադրութիւն ընծայելու տիրող ոգեւորութեան
եւ աղմկայոյզ բազմութեան:

Սակայն Գուլա որ այլեւս կարելի էր Կիրգաի ան-
բաժանելին նկատել, մանրակրկիտ կը գիտէր իր չուրջը
սիւսուած ճոխութիւնները եւ աչերը մեծ մեծ բանալով
ցանկալից ակնարկներ կ'ուղղէր իր չորս կողմը: Թէպէտ
Բերայի մէջ այդ օրինակ ակնախափոք տեսարաններ դի-
տած ըլլալու առիթը շատ անգամ ունեցած էր, սակայն
պերճանքն ու չքողութիւնն այսչափ մօտէն տեսած ըլ-
լալու առիթը երբէք չէր ունեցած: Կը սքանչանար այդ
հիմնալի արդուգարդիւրուն ու չքիզ ապարանաց վրայ
եւ ի ներքուստ դո՛հ կը մնար իրեն եղած առաջարկը
մերժած չըլլալուն համար:

Երբ Եէնիմահալէի ձորակին մէջ մօտան, Կիրգա իր
քայլերը փութացուց եւ զրպանէն բանալի մը հանելով
կոմնակի փողոցին մէջ գտնուած իր տան գուռը բանա-
լու պատրաստուեցաւ:

Երբ գուռը բացուեցաւ, Գուլա որ անձայն, անշուշտ
իրենց կը հետեւէր, անշուշտ ուղեց միաւորն ներս մըտ-
նել, բայց պարոն Օհան որ զինքը չէր նշմարած իսկ
մինչեւ այն ատեն, ուշաբերելով ըսաւ:

— Կարի՛ր, ստահակ, այս բզէզն ալ թառելու բոյն
կը փնտռէ:

— Զեզի ի՞նչ, պարոն, միթէ ձեր բնակարանը՞ կը
մտնեմ, պատասխանեց Գուլա, պիչ պիչ Օհանը դիտելով:

Շարունակելի

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՊԱՂՏԱՏԵԱՆ ԳՐԱՏԱՆ
Սուրբան Համալ ճառարի քիւ 14, Կ. Պոլիս

Ե. ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

ԲԱՌԱՐԱՆ

ՖՐԱՆՍԵՐԷՆԷ - ՀԱՅԵՐԷՆ

Գիւն 22 Ղրշ.

Սոյն Ֆրանսահայ բառարանը յորինուած հետեւողութեամբ Լիդուէի տիեզերական բառարանին, կը պարունակէ Ֆրանսերէն լեզուն զրեթէ բոլոր բառերն իրենց բոլոր առումներով, որպէս եւ ամենէն զործածական ոճերն: Տէմիրճիպաշեան էֆէնտի բառարանութեան մասին իւր ունեցած մասնաւոր յարմարութեամբն որով լսողութիւն բառերով ճոխացուցած է հայ լեզուն, գտած է լեզուն պակասած գրական, գեղեցկագիտական, իմաստասիրական, գիտական եւ արհեստական բառերուն հայերէններն, այնպէս որ կատարելաւ բառարանը մը կրնայ համարուիլ Բառարանս ունեցած այս երբեակ առաւելութեամբք, այսինքն առաւելութիւն Ֆրանսերէն բառից, առաւելութիւն նոր առմանց, առաւելութիւն 15—20,000 նորակերտ հայերէն բառից:

Այս բոլոր առաւելութեամբք Ֆրանսահայ Բառարանս, որ կը պարունակէ իր 1000 երես, կազմեալ կը ծախուի անօրինակ գնով:

ՀԱՆԿ. - ԴՅՈՒՆԿ. — ՍԷՅԼԱՆ — Կ. ՊՈԼԻՍ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԹԵՅԻ

ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

Ճեղայ պէյ խանի դրան կից քիւ 10

Ամենէն ընդարձակ թէյի վաճառատունն ի Կ.

Պոլիս, որ ճիւղեր ունի Օսմ.

Տէրութեան ամէն կողմերը:

Գաւառաց ապրարանքները

փութով եւ խնամով կը գործադրուին:

Չինական, Հնդկ, Ճաւայի եւ Սէյլանի ընտրե-

լագոյն թէյ, ուղղակի բերուած հոս:

Թէյի նոր հունձքն սկսած է գալ:

Զգուշացէք սոյն վաճառանիչին կեղծե-

րէն:



Փետուել ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ստորագրութիւնը:

Պատրաստութիւնը:

ԷՔԻԹԱՊԼ
(ՄԱՊԵՍԱՆ ԵԱԶԱՆԻՅ)
ԱՇԷԱՐԷԻՍ ԷՆ ՀԶՕԲ
Կենաց Ապահովագրական ընկերութիւնը
Երախտորոքեան դրանագրութեան
1 ՄԵԼԵՍ 227 ՄԵԼԵՍ ՖՐԱՆՍ
Ներկայացուցիչ Կ. Պոլիս
ԳԱՌՆԱՆ ԱՍՏՈՒՆՈՒՄՈՐ

ՆՈՐ ԱՅԲԲԷՆԱՐԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ. —

Իզմիրի Մամուրեան սպարանէն հրատարակուած սոյն Բերականը մէքոսով պատրաստուած գործ մը է, եւ լաւագոյնը նմանօրինակ հրատարակութեանց մէջ:

Գիւն 20 փարա:

ԾԵԾՈՒԱԾ ԶՈՒՏ ԻՍՀՈՒԷ

ԹԻԹԵՂԵԱՅ ՏՈՒՓԵՐՈՒ ՄԷԶ

Ի նպաստ Ս. Յակոբայ Ազգային Անկեղանցի

Գիւն մէկ օխայի 12 դամեկան

1. Քիչոն օխայի վերածելով այսուհետեւ ամէն տուփ 50 կամ 100 տիրէ՛մ գուտ խաճուէ պիտի պարունակէ:

2. Խաճուէին գինը, որոյ քիչոն ասկէ առաջ 14 զրշ.ի էր, այժմ մինչեւ ցնոր տնօրէնութիւն, օխան պիտի ծախուի 12 զրուշի, որով 50 տիրէ՛մնոց տուփը պիտի ծախուի 1 1/2 զրուշի, 100 տիրէ՛մնոց տուփը պիտի ծախուի 3 զրուշի:

3. Երկու տեսակ գոյնով խաճուէ պատրաստուեցաւ ըստ հաճոյս սպասողաց, մին բաց գոյն, միւսը՝ թուի գոյն:

Անկեղանոցին խաճուէն կը գտնուի ամէն ծխալվաճառներու եւ մանրավաճառներու քով, բաւական է որ այդ անունով փնտռուի վաճառողներէն:

Խանութպանք պէտք է զիմնն վաճառման կեղրոնատեղին, որ է Ղալաթիա Զինճիլլի խանի կից, Եէնի-Ճամի ճատաէսի, թիւ 70:

Արտօնատէր Ա. ՍՍՔՍԵՆԱՆ

ՏՊԱԿՐՈՒԹԻՒՆ ՍԱՐԵԱՆ

(Նախկին ՊԱՂՏԱՏԵԱՆ Տպարան)

Կ. Պոլիս, Սուրբան Համալ 14.